

Հուշ- ցերեկույթ Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 70 ամյակին ընդառաջ, որին մասնակցել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը

24.02.2015



Փետրվարի 23-ին Վայոց ձորի մարզի Արփի գյուղի Վահիկ Լևոնյանի անվան միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ հուշ-ցերեկույթ, նվիրված Խորհրդային Միության հերոս Վահիկ Լևոնյանին: Միջոցառումը նախաձեռնել էր ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արժեքները թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն», ՊՈԱԿ-ի Վայոց ձորի ՊՄՊ մարզային ծառայությունը, որին աջակցել էին Վայոց ձորի մարզպետարանը, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի մարզային մասնաճյուղը: Միջոցառմանը ներկա էին Վայոց ձորի փոխմարզպետ Մելս Հարությունյանը, Պահպանության ծառայություն ՊՈԱԿ-ի գիտնական-քարտուղար Արմեն Աբգարյանը, ՊՄՊ մարզային ծառայության պետ Մելանյա Դովլաթյանը, Մեծ հայրենականի մասնակից վետերաններ, զինվորականներ: Արփի համայնքի ղեկավարը:

Միջոցառումը մեկնարկեց Վահիկ Լևոնյանին նվիրված Փառքի սրահում և շարունակվեց դահլիճում, ուր ներկայացվեց Մեծ հայրենականի պատմությունը և Վահիկ Լևոնյանի պատերազմական հերոսական ուղին:

Միջոցառման ավարտին սրտի խոսք ասացին ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Արփիար Ղազարյանը, «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գիտնական- քարտուղար Արմեն Աբգարյանը, ՀՀ ՊՆ ԶՈՒ 4-րդ բանակային կորպուսի հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալի Ժ/պ, փոխգնդապետ Վահագն Շահբազյանը, համայնքի ղեկավար, Վահիկ Լևոնյանի եղբորդի Գրիգոր Գրիգորյանը: Բանակ-մշակույթ սերտ գործակցության և մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ներդրած ավանդի համար ՊՄՊ մարզային ծառայության պետ Մելանյա Դովլաթյանը պարգևատրվեց ՀՀ ՊՆ ԶՈՒ 4-րդ բանակային կորպուսի շնորհակալագրով: Տոնական միջոցառումը եզրափակվեց ԽՍՀՄ հերոս Վ. Լևոնյանի հուշարձանի մոտ՝ ծաղիկներ խորհարհելով:

Հուշ-ցերեկույթն ավարտվեց հայկական քոչարիով, ի նշանավորումն Ռեյխստերում Մեծ հայրենականի ավարտին հաղթանակի քոչարիի, ուր պարել է նաև Վահիկ Լևոնյանը: